Ա. Մ. ԹԵՎՈՍՅԱՆ

Հայագիտությունը ծանր կորուստ կրեց. կյանքից անժամանակ հեռացավ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Միքայելի Թևոսյանը:

1960 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի տրամաբանության և էթիկայի բաժինը՝ Ա. Մ. Թևոսյանը իր թեկնածուական դիսերտացիան պատրաստեց խորհրդային նշանավոր փիլիսոփա և տրամաբան Վ. Ֆ. Ասմուսի դիտական ղեկավարությամբ և պաշտպանեց 1963 թվականին: Այնուհետև նա իրեն անմնացորդ նվիրաբերեց հայ տրամաբանական, փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի հետազոտությանը և իր աշխատություններով նոր աստիճանի բարձրացրեց հայագիտության այս կարևորագույն բնագավառը: 1973 թ. «Հայ տրամաբանական միտքը 19-րդ դարում» արժեքավոր աշխատության համար նրան շնորհվեց փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Նրա գրչին պատկանող՝ «Ա. Գարագաշյանի փիլիսոփայական հայացքները», «Ն. Ռուսինյանի աշխարհայացքը», «Կանտը և 19-րդ դարի հայ փիլիսոփայական միտքը», «Ռևբենս Պերպերյան» և մյուս մենագրությունները ծանրակշիռ ներդրում են 19-րդ դարի հայ տեսական մտքի ուսումնասիրության գործում: Պրոֆ. Թևոսյանի գիտահետազոտական ժառանգության բնորոշ առանձնահատկությունն այն է, որ վերհանելով հայ մտավոր մշակույթի պատմության անհայտ էջերը, ճստակեցնելով 19-րդ դարի փիլիսոփայության հիմնական ուղղությունները, տալով նրա խոշորագույն ներկայացուցիչների դիմանկարները, նա միաժամանակ հայ փիլիսոփայական և տրամաբանական միտքը դիտարկում էր եվրոպական փիլիսոփայության ընդհանուր պատմության հենքի վրա: Մեծ է պրոֆ. Թևոսյանի դերը հայ փիլիսոփայության պատմության մասնագետների պատրաստման գործում:

Պրոֆ. Ա. Թևոսյանը իր բեղմնավոր գիտահետազոտական գործունեությունը մշտապես զուգակցել է դասախոսական աշխատանքի հետ Երևանի պետական համալսարանում, Վ. Բրյուսովի անվ. ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում և այլ բուհերում, իսկ 1972-ից ԳԱ փիլիսոփայության ամբիոնում՝ նախ պրոֆեսորի պաշտոնում, և ապա 1981 թ.՝ որպես ամբիոնի վարիչ: Իր մասնաջիտական բազմակողմանի գիտելիքներով և բարոյական նկարագրով նա խոր ազդեցություն է գործել երիտասարդ սերնդի ձևավորման վրա:

Պրոֆ. Ալ. Թևոսյանի գիտական ժառանգությունը մնայուն տեղ է գրավում հայագիտության մեջ: Մեր մտավորականության հիշողության մեջ պրոֆ. Ա. Թևոսյանը կմնա իբրև սկզբունքային, հայրենասեր, մարդկային բարձր արժանիքներով օժտված անձնավորություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ